



**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ**

Հ Ր Ա Մ Ա Ն № 4-Լ

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի ԹԻՎ 1-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Դատական դեպարտամենտում ծառայության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հուլիսի 12-ի թիվ ԲԴԽ-25-Ո-58 որոշման 1-ին հավելվածի 19-րդ կետի 10-րդ ենթակետի՝

1. Բարձրագույն դատական խորհրդի 2019 թվականի հունվարի 31-ի «Դատական դեպարտամենտի հաստիքացուցակը հաստատելու մասին» թիվ 1-Լ հրամանում (2021 թվականի ապրիլի 7-ի թիվ 1-Լ, սեպտեմբերի 28-ի թիվ 2-Լ և նոյեմբերի 2-ի թիվ 3-Լ հրամանների խմբագրությամբ) կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները՝

1) Հրամանի 1-ին հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն հրամանի 1-ին հավելվածի.

2) Հրամանի 5-րդ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն հրամանի 2-րդ հավելվածի:

2. Ընդունել ի գիտություն, որ սույն հրամանի 2-րդ հավելվածի 2-րդ, 3-րդ, 5-9-րդ և 11-13-րդ կետերով սահմանված պաշտոնները նշվում են համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի օգոստոսի 6-ի թիվ ԲԴԽ-31-Ո-74 որոշման, մինչև տվյալ որոշման մեջ օրենքով սահմանված կարգով համապատասխան փոփոխությունների կատարումը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**

2021թ. նոյեմբերի 29
ք. Երևան

Գ. ԶԱՆԳԻՐՅԱՆ